Ժ.

Շաւշէտ, Իմերխեւ, եւ Կլարջէտ:

Խալխալի Որջոխը (Որջնհաղ) անցնելուց յետոյ, Արդուինի սահմանում ջրից Ճորոխին խառնւում է Շաւշէտի վտակը իր աջակողմեան Իմերխեւ եւ ձախակողմեան Կլարջէտ (Արդանուչ) ճղերով, որոնք գալիս են արեւելքից–արեւմուտք: Այս վտակի կենդրոնական մասը, աւելի քան 75 կիլոմետր երկարութիւն ունի ակունքից մինչեւ խառնունքը: Օլթիի Տաուսկեր (Տայոց–քար), Փանաղկերտ, Բանջրոտ գաւառամասերը բաժանում են Կլարջէտից Մակրիեսի, Սալջուրի, Թոփեօլու, Եասամալի լեռները, հարաւից, Կրաչ–Թեփէն եւ Եալաղուզջամը՝ արեւելքից, Կուրդեվանի, Կայարաշի եւ Բարդլանի լեռները՝ հիւսիսից, իսկ արեւմուտքից՝ Գեղոտ եւ Զանգա լեռները:

Արդանուչի վտակը սկսւում է Եասամալից, հարաւից–հիւսիս է հոսում, Կարալճակից, նախ մտնում է Խեւա, Գոլաշէն (Գերաչէն), Գիւլիջա, Լոնգոտ–Խեւ, Արնաուլ, Էնի–բաբաթ (Էնգի–բաբաթ), Գիակարմունջ, Շահգիլար, Խերտվիս, Շուբալտ, Ախարշիա, Խարաուլ, Անկլիա, Մէյդան, Զիրկիս, Խաթ, Սխա գեղերից եւ ապա Արդանուչ բերդի տակով անցնում է, ընդունելով այս գեղերից համանուն առուները, որոնք ոռոգում են անցած սահմանները: Արդանուչի առուակը թափւում են